Պարույր Սևակ

Երևանին

Ա

Նա փոխվում է ամեն վայրկյան՝
Արբունքահաս պատանու պես,
Ե՛վ դեռ մանուկ, և՛ առնական,
Արբունքահաս պատանու պես:
Երեկ՝ խաղում փոշիներում,
Լվացվում է այսօր նա, տե՛ս,
Հայելակերպ ավազանում
Արբունքահաս պատանու պես:
Ինքն իր աչքում երեկ տգեղ,
Ինքն իրենից դժգոհ այնպես,
Հիմա հրճվում է իրենով՝
Արբունքահաս պատանու պես:
Արբունքահաս պատանու պես
Նոր է միայն նա կյանք մտնում,
Նա ինքն իրեն նոր է գտնում
Արբունքահաս պատանու պես:
Բայց և հիմա պա՞րզ է այնպես
Նրա գալիքն ու ապագան՝
Երբ որ դառնա նա առնական
Արբունքահաս պատանու պես:

Բ

Սա պատմելու բան չէ,
Սա զգալո՛ւ բան է...
Ա՛խ, ինչքա՛ն է տանջել
Ինձ իմ Երևանը:
Շենքերին ես նայում,
Պալատներին վսեմ,
Եվ ուզում ես անվերջ
Խոսե՛լ, խոսե՛լ, խոսե՛լ:
Եվ ուզում ես խոսել
Ինչ-որ ուրի՛շ ոճով,
Բայց կորչում է ասես
Հայերենը քո ճոխ:
Մի «չքնաղ» է մնում.
Մի «հոյակապ», մի «պերճ»,
Մի մեծ «չնաշխարհիկ»,
Մի «վեհ» փոքրիկ և՝ վե՛րջ:
Ու ծով հիացումը
Քարանում է, լռում:
Քարանում է այնպես,
Ինչպես հեքիաթներում:
Լեզուդ համրանում է,
Լոկ հայացքդ է խոսում,
Կարծես մոռանում ես
Քո մայրենի լեզուն...
Սա պատմելու բան չէ,
Սա զգալո՛ւ բան է:
Դրա համար պիտի
Տեսնել Երևա՛նը:
Գ

Քաղաքամերձ անտառն իր կանաչին
Դանդաղ և աննկատ
Դեղին ոսկեթել է ընդելուզում:
Նորքի կտուրներին դդում ու չիր
Արեգակի վերջին
Լիցքերն են ծուլորեն կորզել ուզում:
Ցածում՝
Արարատյան տաք հովտի մեջ,
Հորդ անձրևից հետո, Երևանն է շողում
Աշնանային շոյող արեգակի ներքո:
Եվ կամարնե՛րը կոր,
Եվ լորինե՛րը մայթամերձ
Շողշողում են, զինվում մի նոր կախարդանքով՝
Անձրևաթաց փողոցների հայելու մեջ
Ճանաչելով իրենք իրենց
Ու մնալով խիստ զոհ:
Ցածում Երևանն է,
Որ թոչելով Զանգուն և անցնելով այն կողմ՝
Կանգ է առել մի պահ,
Որ շունչ առնի, ապա
Նորից ձգվի դեպի Էջմիածին, Փարպի.
Նա՛, որ իր մի ձեռքը Քանաքեռին հպած,
Մյուս թևը իր բաց
Տարածում է դեպի այն լեռը, որ
Հին լեգենդից բացի՝ հայտնի է նոր
Մեր հայկական գերբից:
Երևանն է շողում իբրև հսկա մագնիս,
Իր կողերից կախած բազում նոր ավաններ՝
Փոքրիկ երևաններ,
Որոնք իրար հանդեպ, իբրև հարևաններ,

Նախանձո՛տ չեն, սակայն նախանձախնդի՞ր են.
Ասֆալտ ու տուֆ հագնել,
Երևանի կողքին ինքնավայել կանգնել -
Նրանց համար ահա թե ո՛րն է խնդիրը:
Իսկ այդ ավանների անուննե՛րը խոսուն.
Նոր Կիլիկիան ահա,
ահա Արաբկիրը,
Ահա Նոր Արեշը,
Նոր Զեյթունը:
Յուրաքանչյուր ավան
տարբեր մի երկիր է,
Եվ ամեն մի երկիր
Արժանացել հարկի,
Լոկ այստեղ է գտել
վերջին հասցեն,
տունը:
Կարելի է կարծել, որ աշխարհը համայն
Սեղմվել ու փոքրացել
Եվ ձգվելով թովիչ այս քաղաքից՝
Նրա շուրջն է սիրով խմբվել հիմա:
Ի՞նչ է, արտառո՞ց է, զարմանալի՞:
Մի մոռացեք սակայն, որ այս հարցում
Քար զարմանքի բոլոր փակ դռներն է բացում
Տխուր մեր անցյալը -
հին բանալին:
Մինչդեռ նորը, խնդրե՛մ.
Իբրև արվեստագետ և իսկական, և մեծ,
Խոսում է ո՛չ այնքան, որքան ցույց է տալիս.
Երևանն է շողում
Արարատյան բեղուն տաք հովտի մեջ:

Երևանն է շողում
իբրև հսկա՛ մագնիս...

06.VII.1946թ.
Չանախչի